ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՕՏՈՒՄ

Ինչպէս Արմենպրէսի թղթակցին հաղորդեցին Հայաստանի Հանրապետութեան Ներքին Գործերի նախարարութիւնում, Մայիսի 8ի ժամը 15ի դրութեամբ հանրապետութեան սահմանամերձ գօտում իրադրութիւնը մնում էր լարուած, աւելին, զինուորական ստորաբաժանումների ուշադրութեան կենտրոնում աւելացաւ եւս մէկ շրջան՝ Վարդենիսը։

ՎԱՐԴԵՆԻՍ. Առաւօտեան ժամը 11ի մօտ Քէլբաջարի շրջանից Վարդենիսի օդային տարածքն են ներխուժել ռազմական երեք ուղղաթիռ։ Որոշ ժամանակ սաւառնելուց յետոյ նրանք կրկին վերադարձել են հարեւան հանրապետութեան տարածք։ Ապա ուղղաթիռների մի ջոկ կրկին երեւացել է Վարդենիսի տարածքում եւ գնդակոծել է Տրետուք գիւղի դաշտում աշխատող տրակտորը։

Ժամը 15ն անց 40 րոպեին շրջանի մի խումբ ղեկավարներ Քելբաջարի սահմանագծում հանդիպել են ոմն մայոր Գուսեւին, որը նրանց ասել է, որ իրենք կատարում են ԽՍՀՄ պրեզիդենտի հրամանագիրը անօրինական զինուած ջոկատները զինաթափ անելու մասին։ Այդ գործողութիւնը ղեկավարում է մի գենեռալ, որի տրամադրութեան տակ կայ 40 զրահամեքենայ եւ 4 ուղղաթիռ։

Նոյն օրը 4 զրահամեքենայ եւ մէկ ռազմական ուղղաթիռ ներխուժել են Ջոդի ոսկու կոմբինատի տարածքը։ Ուղղաթիռը եւ երկու զրահամեքենաները մօտեցել են կոմբինատի վարչական շէնքին։ Ուղղաթիռները օդից կրակ են բացել վարչական շէնքի վրայ եւ հեռացել դէպի Քէլբաջարի շրջանը։

ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿ. Զինուորականների կողմից նշանակուած վերջնագրի ժամկետը լրացաւ ժամը 10ին։ Դրանից երկուսուկէս ժամ անց 21 տանկեր շրջապատել են գիւղը։ Գիւղ մտած զինուորականները զինաթափել են գիւղը պաշտպանող տասը միլիցիոներների։ Բացի այդ, գիւղում նրանք բռնագրաւել են եւս 27 որսորդական հրացան, մէկական հակակարկտային հրանոթ եւ քարշակ։ Նրանք սպառնացել են արծուաշէնցիներին, որ վաղը նոյնպէս կը գան եւ շներով կը խուզարկեն ողջ գիւղը։

ԳՈՐԻՍ. Իրադրութիւնը նոյնպէս լարուած է. զինուորականները այստեղ են մտցրել երեք տանկ, որոնցից մէկը գտնում է Շուռնուխ գիւղում, միւսը՝ անտառում, իսկ երրորդը՝ Բարձրաշէն գիւղում։

ԻՋԵՒԱՆ. Վերադարձուել են Կիրանց գիւղից վերցուած երեք պատանդները։ Երեկոյեան ժամը 18ին Ղազախի կողմից կատիւշաներից գնդակոծուել են Աճարկուտ աւանը, Կիրանց, Բերքաբեր գիւղերը։ Նոյն ժամերին Սոֆլու գիւղի կողմից գնդակոծուել է Ազատամուտ աւանը։ Կիրանց գիւղում ուղղաթիռներով դեսանտ է իջեցուել։

ՏԱՈՒՇ. Ներքին Կարմիրաղբիւր գիւղը առաւօտեան ուղղաթիռներից ռմբակոծելուց յետոյ «քաջարի օդաչուները» եւս երեք անգամ այցելել են այդ գիւղը, շարունակելով գնդակոծութիւնը։ Բերդի օդանաւակայանը շրջապատուած է։ Այն գնդակոծւում է։ Բերդ-Իջեւան ավտոմայրուղում, Պառաւաքար գիւղի մօտ զինուորականները գնդակոծել են անցնող բոլոր ավտոմեքենաները։ Բարեբախտաբար, չկան ո՛չ զոհուածներ, ո՛չ էլ վիրաւոներ։ Ներկայումս այդ ճանապարհը փակ է։

ԿԱՊԱՆ. Կապան-Գորիս մայրուղու վրայ, Որոտան գետի կամուրջի մօտից մինչեւ Կարմրաքարի հանգստեան տունն ընկած ճանապարհը զինուորականների գնդակոծութեան պատճառով փակ է։ Նոյն մայրուղու վրայ 22րդ եւ 43րդ կիլոմետրերի միջեւ ընկած բոլոր հայկական գիւղերը պարբերաբար ենթարկւում են գնդակոծութեան։

Այսօր «Էրեբունի» օդանաւակայանում վայրէջք կատարեցին երկու ուղղաթիռ եւ «ՅԵԱԿ-40» երեք ինքնաթիռ, որոնք Ստեփանակերտից Երեւան հասցրին 130 գետաշէնցիների՝ կանանց, ծերերի ու երեխաների։